ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

8 ԱՊՐԻԼԻ 2022 թ.
№ 5 (1084)

100

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԲՈՒՀ Է»,-

ասում է Վահրամ Դումանյանը

Մարտի 30-ին ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը և նախարարի տեղակալ, ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանն այցելեցին Մանկավարժական համալսարան՝ հանդիպելու բուհի հոգաբարձուների խորհրդի անդամների և պրոֆեսորա-դասախոսական կազմի հետ:

Վահրամ Դումանյանը շնորհավորեց համալսարանի նորընտիր ռեկտոր Սրբուհի Գևորգյանին և մաղթեց բեղմնավոր աշխատանք՝ ի շահ մանկավարժական կրթության:

Նախարարը խոսեց մանկավարժական կրթության ներկա խնդիրների, դրանք համատեղ ուժերով լուծելու ուղիների և բուհի տեսլականի մասին:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը վստահեցրեց, որ բուհը գիտակցում է իր պատասխանատվության տիրույթը և առաքելությունը՝ որակական գործընթաց կազմակերպելու և առկա մարտահրավերներին դիմակայելու առումով:

Համալսարանի ղեկավարը ներկայացրեց հոբելյանական տարվա կարգախոսը՝ «365 օր դպրոցում՝ ուսուցչի և աշակերտի կողքին», որի ներքո բազմաթիվ ձեռնարկներ են իրականացվում համալսարան-դպրոց փոխայցելությունների շրջանակում:

ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը 80-ամյակի կապակցությամբ շնորհավորեց և ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդի անդամ, մանկավարժական ասպարեզի երախտավոր, ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանին՝ հավելելով.«Ձեր փորձը, գիտելիքը և սերը մանկավարժության ոլորտի նկատմամբ այսօր մեզ շատ անհրաժեշտ են»:

Ակադեմիկոսն ընդգծեց, որ մանկավարժական համայնքն այսօր մեծ հոգածության կարիք ունի՝ ասելով.«Կես դարից ավելի զբաղվել եմ մանկավարժությամբ. այսպիսի մի խորհուրդ կա՝ եթե ունես լավ ուսուցիչ, կունենաս նաև լավ աշակերտ, ուսանող և գիտնական: Ամեն ինչի սկիզբը դրվում է դպրոցում, և պետք է վերականգնել ուսուցչի հեղինակությունը: Այս առումով Մանկավարժական համալսարանը կանգնած է լուրջ մարտահրավերների առջև, որոնք, հուսով եմ, համատեղ ուժերով կլուծվեն»:

Նախարար Վ. Դումանյանը խոսեց կրթական ոլորտի բարեփոխումների մասին՝ անդրադառնալով բուհերին և հանրակրթությանը, լսեց Մանկավարժական համալսարանի դասախոսներին մտահոգող հարցադրումները՝ դրանց վերաբերյալ արտահայտելով իր նկատառումները: Մանկավարժական կրթության բարեփոխումների համատեքստում նա կարևորեց ուսուցչի հեղինակության վերականգնումը՝ ասելով, որ նա պետք է լինի հասարակության հարգանքը վայելող թիվ մեկ անձնավորությունը:

Բուհական կառույցն ավանդույթների պատմություն է, իսկ 100-ամյա Մանկավարժականն, անշուշտ, ավանդույթներ ունեցող բուհ է՝ ամփոփեց նախարարը:

ՌԵԿՏՈՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԵՐԳԵՅ ԿՈՊԻՐԿԻՆԻՆ

Մարտի 24-ին Մանկավարժական համալսարանի ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանն ընդունեց ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինին:

Հանդիպմանը ներկա էին նաև բուհի Աշխատակազմի և միջազգային համագործակցության, Ուսումնագիտական գծով պրոռեկտորներ Մարիաննա Հարությունյանը և Մարիամ Իսպիրյանը:

Պրոֆեսոր Ս. Գևորգյանը հանգամանորեն ներկայացրեց ռուսաստանյան մի շարք բուհերի հետ Մանկավարժական համալսարանի համագործակցային կապերը, ինչպես նաև ռուսաց լեզվի զարգացման գործում ընդգծեց բուհում գործող «Պուշկինի ինստիտուտ» ռուսաց լեզվի ուսուցման և թեստավորման կենտրոնի աշխատանքը: Համագործակցությունը տարիների փորձ ունի, և այս համատեքստում են ուրվագծվում հեռանկարները: Խոսակցություն ծավալվեց գիտակրթական ասպարեզում հայ-ռուսական հարաբերությունների ամրապնդմանը միտված ձեռնարկների շուրջ:

Ռեկտորը խոսեց նաև նոր ժամանակների ուսուցչի պատրաստման գործընթացին վերաբերող տարբեր գործընթացների, հայ-ռուսական համաժողովներին մասնակցության և ակտիվ համագործակցության, դպրոցներում ռուսաց լեզվի դասավանդման հիմնահարցերի, ինչպես նաև համալսարան-դպրոց-դեսպանատուն կապի ամրապնդման անհրաժեշտության մասին:

Դեսպան Սերգեյ Կոպիրկինն իր աջակցությունը հայտնեց բուհի ղեկավարությանը կրթական տարբեր ծրագրերի իրականացման գործում, միաժամանակ գիտաուսումնական գործընթացների համատեքստում դեսպանն անդրադարձավ ռուսաց լեզվի զարգացման խնդիրներին, որոնց լուծմանը նպաստում են համատեղ իրականացվող ձեռնարկները:

Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանն իր նկատառումներն արտահայտեց Հայաստանում ռուսերենի դասավանդման որակի բարելավման խնդիրների շուրջ, իսկ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը խոսեց հայ-ռուսական միջազգային ծրագրերի ակտիվացման մասին՝ այդ համատեքստում ընդգծելով համալսարանի կողմից իրականացվող «Ամառային դպրոց» միջազգային ծրագրի կարևորությունը:

Դեսպանն առաջարկեց համագործակցության հնարավորությունները դիտարկել և կոնկրետ ծրագրեր ներկայացնել, որպեսզի առավել իրատեսական դառնան առաջիկա համագործակցության հաջորդական քայլերը:

ԱՆԿԵՂԾ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱԿՏԻՎԻ ՀԵՏ

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը մարտի 25-ին հանդիպեց բուհի Ուսանողական ակտիվի հետ: ՈՒԽ նախագահ Պարույր Գալստյանը ուսանողների անունից շնորհավորեց նորընտիր ռեկտորին ընտրվելու կապակցությամբ և մաղթեց բեղուն աշխատանք:

Ռեկտորը յուրաքանչյուր համալսարանի, այդ թվում և մեր բուհի համար կարևորեց ուսանողական համակազմը, որովհետև նա՝«ներկայացնում է համալսարանի դեմքը, կարողությունը, ներուժը, ակտիվությունը, համալսարանի որակավորման շրջանակներում անձանց հետ տարբեր մակարդակներում փոխներգործելու կարողությունները և համալսարանի պատիվը»:

Ռեկտորը ընդգծեց գիտակրթական ծրագրերում ներգրավվելու այն առավելություններն ու հնարավորությունները, որն ունի թվային ժամանակաշրջանում ապրող նոր սերնդի ուսանողությունը: Համալսարանի ղեկավարը համոզված է, որ ներկա ուսանողների մի մասը հետագայում աշխատանքի կանցնի համալսարանում և կրթական համակարգի ու մանկավարժական գիտության որակապես նոր մակարդակ կապահովի, կրկնակի զարգացումներ ու նոր ձեռքբերումներ:

Սրբուհի Գևորգյանը հետադարձ հայացքով հիշեց իր ուսանողական տարիները

համալսարանի Հոգեբանության ֆակուլտետում՝ համեմատական բնութագրի մեջ փորձելով ներկայացնել սերունդների առաջընթացը:

Ուսանողներն անկեղծ երկխոսության միջավայրում նորընտիր ռեկտորին ուղղեցին իրենց հուզող հարցերը, կիսեցին մտահոգությունները. դրանք վերաբերում էին ռեկտորի առաջնային ծրագրերին, լաբորատոր նյութերի և սարքավորումների սղությանը, դաշտային պրակտիկաների վերականգնմանը, ֆակուլտետներում առկա տեխնոլոգիաների տեխնիկական խնդիրներին, իսպաներեն լեզու ուսումնասիրող ուսանողներին մանկավարժի որակավորում տալուն և այլն:

Ռեկտորը և հանդիպմանը մասնակցող Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը ուսանողներին վստահեցրին, որ լիազոր մարմնին է ներկայացվել վերոհիշյալ և այլ հարցերով փաթեթ:

Սրբուհի Գևորգյանը հանգամանորեն պատասխանեց բոլոր հարցադրումներին՝ ընդգծելով, որ համալասարանի թիվ մեկ խնդիրը ռազմավարական նշանակություն ունեցող մասնագիտություններն են և դրանց գծով դիմորդներ ունենալը:

ԼՐԱՀՈՍ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Մարտի 20-ին ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը հանդիպեց համալսարանի երկու ուսանողների հետ, որոնք նոր էին վերադարձել Բելառուսի Մաքսիմ Տանկի անվան պետական մանկավարժական համալսարանից, որտեղ մասնակցել էին «Աստղային արշավ» խորագրով ծրագրին:

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Վարդուհի

Մկրտչյանը և Հատուկ կրթության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Լուսինե Խաչատրյանն իրենց տպավորությունները կիսեցին ռեկտորի հետ:

Խոսակցություն ծավալվեց Բելառուսի համալսարանի կրթական համակարգին վերաբերող հարցերի, միջմշակութային շփումների շուրջ, համեմատությունների համատեքստում ուսանողներն անդրադարձան երկու համալսարանների առանձնահատկություններին:

Ուսանողները ռեկտոր Ս. Գևորգյանին հանձնեցին իրենց հետ բերած երկու գիրք, որոնցից մեկը Բելառուսի համար 1941-1944 թթ. մղված մարտերին հայ զինվորների մասնակցության մասին էր:

ԳՐՔԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մարտի 22-ին Մանկավարժական համալսարանի հումանիտար ընթերցանության սրահում կազմակերպվել էր մանկավարժության ամբիոնում տարբեր տարիների դասավանդած շուրջ 148 հեղինակի 247 գրքի ցուցադրություն. դրանք դասագրքեր են, ուսումնաօժանդակ և մեթոդական ձեռնարկներ, մենագրություններ: Խորհրդանշական է, որ ցուցադրության ամենահին՝ 1916-ին թվագրված գրքի հեղինակը Մանկավարժության ֆակուլտետի հիմնադիր և առաջին դեկան Գուրգեն Էդիլյանն է:

Գիտական գրադարանի նախաձեռնությամբ բացված ցուցահանդեսը յուրո-

րինակ տուրք էր մանկավարժական կրթության նվիրյալների գործի հանդեպ, ովքեր տարիների տքնաջան աշխատանքով ու ջանքով ստեղծել և սերունդներին են փոխանցել մանկավարաժական գիտության զարգացման գրական մեծաթիվ ժառանգություն:

Գրադարանի նախաձառնությամբ հաջորդաբար՝ 10-օրյա ժամկետներով, կներկայացվեն համալսարանի ֆակուլտետների ամբիոնների դասախոսների հեղինակած և համահեղինակությամբ գրքերը:

Բոլորովին էլ պատահական չէր, որ առաջինը ներկայացվել էր համահամալսարանական Մանկավարժության ամբիոնը (նախկինում՝ Ընդհանուր մանկավարժության ամբիոն), որի հենքի վրա էլ ստեղծվել է Մանկավարժական ինստիտուտը:

Ցուցադրության մեջ ամենամեծ թվով գրքերի հեղինակը պրոֆեսոր Զուլիետա Գյուլամիրյանն է (30 գիրք), հաջորդը՝ Լաուրա Ասատրյանը (17 գիրք) և Արամ Բալյանը (13):

Դասավանդման մեթոդիկա. ավանդականի ու նորի խաչմերուկում

21-րդ դարի ուսուցչի կերպարին մեր օրերում հաճախ են անդրադառնում. հնչում են ամենատարբեր կարծիքներ՝ թե՛ ճիշտ, թե՛ սխալ: Երբեք այսքան չի քննարկվել ուսուցչի կերպարը, մասնագիտական ունակությունները, դասավանդելու այս կամ այն մեթոդը, նորարարական տեխնոլոգիաներին ինտեգրվելու չափը և այն դասագործընթացում կիրառելը…Եվ ամենաքիչը քննարկվում է ուսուցչի կերպարի ու առաքելության հանդեպ վերաբերմունքի պակասը…

Որտե՞ղ պետք է փնտրել ուսուցչի հանդեպ հանրության մի մասի անվստահության ակունքը…Համալսարանո՞ւմ, որտեղ պատրաստում են նրանց, դպրոցը համակարգող կառույցներո՞ւմ, թե՞ մի ուրիշ տեղ: Մի բան, սակայն, պարզ է. 21-րդ դարի տեխնոլոգիաների այս ժամանակաշրջանում ուսուցիչը հայտնվել է ավելի քան բարդ իրավիճակում. նա պետք է փոխվի՝ ուսուցանողից վերածվի ուղղորդողի, անցկացնի նորարարական մեթոդներով հետաքրքիր դասեր… Միաժամանակ նրան պետք է տալ ազատ մտածելու, ազատ գործելու, իրեն և սովորողներին հարմար ու հասկանալի մեթոդներով կրթելու և դաստիարակելու հնարավորություն:

Միգուցե եկել է ժամանակը այլ կերպ նայելու ամեն տեսակ քննություններին… Մի՞թե սոցիալական ցածր, անհավասար կարգավիճակում հայտնված ուսուցչի համար որակավորումը և սոցիալական կարգավիճակը համատեղ բարձրացնելու այլընտրանք չկա…

Հասարակության տարբեր շերտերում քննարկվող այս թեման ինձ տարավ Մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետ, որտեղ փորձեցի լսել տարիների փորձառություն ունեցող և դասավանդման մեթոդիկաներին վարպետորեն տիրապետող, իրենց գործի նվիրյալ դասախոսների՝ ինչ դասավանդման մեթոդներ են կիրառում նրանք ապագա ուսուցչի պատրաստման գործընթացում:

«Ընդհանրապես դասավանդման մեթոդիկայի հարցը հետաքրքրում է ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ աշխարհի մեթոդիստներին,-ասում է բանասիրական գիտությունների դոկտոր Աշոտ Գալստյանը:-Այսօր մեթոդիստները պրպտումների մեջ են՝ ինչպես անել, որ դասը լինի հետաքրքիր, ինչ մեթոդներ կիրառել: Մեր ֆակուլտետում հաճախ ենք քննարկում մեթոդիկայի հիմնախնդիրները՝ ինչպես անցկացնել դասը, որ այն աշակերտի համար հետաքրքիր լինի: Դաս-դասարան հին գործընթացն այսօր սպառված է. պետք է կարողանանք ներկայացնել նոր դասի մոդել»:

Ա. Գալստյանի կարծիքով այլընտրանքային դասերն այսօր առավել քան պետք են դպրոցին. զօրօրինակ, մայրենիի դասը բնության գրկում, գրադարանում կամ թանգարանում:

Դասախոսն այդպիսի փորձառություն ունի. Հունգարիայի Պիտեր Պազմանի համալսարանի ուսանողներին, որոնք մեկ կիսամյակ, սովորել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, դասավանդել է հայոց լեզու սկսնակների համար: Դասերը հաճախ է անցկացրել բնության գրկում, շախմատ խաղալիս. որովհետև հայերեն առաջին բառերը սովորելու և յուրացնելու համար դրանք լավագույն ձևն են:

Մեթոդիստներն այսօր պրպտումների մեջ են՝ ինչ դիդակտիկա կիրառել դասագործընթացում:

Ֆակուլտետում երկու ուսանող մագիստրոսական թեզեր են գրում «Հայոց լեզվի և գրականության ուսուցչի ժեստերը ուսումնական գործընթացում» թեմայով: Դասախոսները կարևորում են դա՝ ինչ ժեստային համակարգ կիրառի ուսանողը, որ այդ ժեստերը՝ որպես հաղորդակցման օժանդակ միջոցներ, նպաստեն դասի արդյունավետության բարձրացմանը:

Ֆակուլտետում ուսանողները հաճախ են կազմակերպում դասեր, երբ ուսուցչի դերում աշակերտներն են: Սա նույնպես նոր մոդել է. ուսուցիչն ուղղորդում է, իսկ դասը վարում են աշակերտները:

Աշոտ Գալստյանը համոզված է՝ դասի ոչ ստանդարտ տեսակներ այսօր հրամայական են ներմուծել հանրակրթական դպրոց:

Բանասիրական ֆակուլտետում ուսանողներին ոչ միայն մասնագիտական կրթություն են տալիս, այլև, հատկապես պրակտիկաների ընթացքում, սովորեցնում են ինչպես կողմնորոշվել մանկավարժական տարբեր իրավիճակներում: «Այսօրվա ուսուցիչը պետք է վերափոխվի, միայն գիտելիքը քիչ է,-ասում է Ա. Գալստյանը: Աշակերտը կարող է համակարգչով շատ բան իմանալ և յուրացնել, բայց այստեղ որակներ են պետք. մեր ուսուցիչը հոգեբանական և մանկավարժական խնդիր է լուծում»:

Ըստ Ա, Գալստյանի՝ մանկավարժական ճգնաժամի պատճառները տարբեր են: Օրինակ, նախկինում դպրոց էին գնում 7 տարեկանից, այսօր՝ հինգուկես-վեց տարեկանից, նախկինում երկկազմ դասարաններ չկային, հիմա սահմանապահ գյուղերում այս խնդիրը շատ է դիտարկվում, և պետք է կարողանան մեթոդիկան առաջարկել ուսանողին, հատկապես, որ ֆակուլտետում սովորում են սահմանապահ գյուղերի ուսանողներ: Խնդիր-

➤3

ԼՐԱՀՈՍ

Հոբելյանական ցուցահանդես

Մարտի 21-ին Երևանի Նկարիչների միության սրահում բացվեց Մանկավարժական համալսարանի 100-ամյակին նվիրված հոբելյանական ցուցահանդես: Ներկայացվել էր Գեղարվեստական կրթության ֆակուլտետի 40 դասախոսի 122 աշխատանք՝ գեղանկար, գոբելեն, բատիկա, քանդակներ և զարդեր, դեկորատիվ-կիրառական արվեստի զանազան նմուշներ:

Ներկա էր համալսարանի ղեկավար կազմը, ելույթ ունեցան նորընտիր ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը, Հայաստանի նկարիչների միության նախագահ Սուրեն Սաֆարյանը:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի շրջանավարտ, նկարիչ Արթուր Օշականցին հոբելյանի առթիվ իր մեծադիր ստեղծագործական աշխատանքներից մեկը նվիրեց համալսարանին՝ որպես տուրք համալսարանական իր վարպետ դասախոսների հիշատակին:

Շվեյցարացի ուսանողները՝ Մանկավարժականում

Փոխադարձ այցով մարտի 28-ից Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետում իրենց երկշաբաթյա պրակտիկան կանցկացնեն Շվեյցարիայի Ցյուրիխի, Բազելի և Լյուցերնի արվեստի համալսարանների կերպարվեստի մանկավարժության բաժնի 7 ուսանողներ: Երեք դասախոսի ուղեկցությամբ նրանք կմասնակցեն կերպարվեստի բաժնի դասերին, կծանոթանան դասավանդման մեթոդիկաների առանձնահատկություններին:

Ի դեպ, փոխանակման ծրագրի շրջանակում նրանց են միացել նաև Վրաստանի Իլյայի անվան պետական և Աբխազիայի անվան մանկավարժական համալսարանների 4 դասախոս:

Շվեյցարացի ուսանողները կայցելեն հանրապետության տարբեր ավագ դպրոցներ, կմասնակցեն պրակտիկ դասերի, համատեղ քննարկումներ կանեն:

Արտերկրի դասախոսներին և ուսանողներին ողջունեց ՀՊՄՀ Միջազգային և աշխատակազմի գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը: Նա կարևորեց «Արտաս» հիմնադրամի նախաձեռնությամբ փոխանակման ծրագիրը, որը համալսարանների համար երկուստեք օգտակար կլինի: Պրոռեկտորը հույս հայտնեց, որ ծրագիրը շարունակական կլինի և հետագայում ավելի շատ ուսանողների կընդգրկի:

Ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արա Հակոբյանն ասաց, որ ծրագիրն արդեն երկու տարի իրականացվում է: Փոխադարձ այցերի ընթացքում կփորձեն գտնել երկու երկրների համալսարանների դասավանդման մեթոդիկաների ընդհանրությունները, հայ-շվեյցարական դասավանդման մեթոդների համատեղելի կողմերը՝ միաժամանակ ուսուցման մեթոդների մեջ հաշվի առնելով ազգայինը:

ԼՐԱՀՈՍ

ՀԵՐԹԱԿԱՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՊՄՀ գիտական գրադարանի հումանիտար ընթերցասրահում բացվեց հերթական ցուցադրությունը. հոգեբանական գիտության ուղղությամբ 102 հեղինակների և համահեղինակների136 դասագիրք, ուսումնական և ուսումնաօժանդակ ձեռնարկներ, մենագրություններ, գիտաժողովների ժողովածուներ, հանդեսներ՝ընդամենը 150 անուն գիրք:

Ցուցադրությունն ընդգրկում է 1930-2022 թվականներին հրատարակված նյութերը, որտեղ ամենահինը Գուրգեն Էդիլյանի «Հոգեբանություն» և «Ձեռնարկ հոգեբանության» դասագրքերն են (1930):

Ցուցահանդեսում տեղ են գտել նաև դոկտոր, պրոֆեսորներ Մկրտիչ Մազմանյանի, Հովսեփ Թութունջյանի, Սերգեյ Արզումանյանի, Կառլեն Ոսկանյանի, Սրբուհի Գևորգյանի, Վլադիմիր Կարապետյանի, Սամվել Խուդոյանի, Մելս Մկրտումյանի, Վազգեն Մարգարյանի, Սուսաննա Փիլոսյանի, Կամո Վարդանյանի, պրոֆեսոր Ալբերտ Նալչաջյանի, դոցենտներ Ռուզաննա Պետրոսյանի, Լևոն Սարգսյանի և հոգեբանության ամբիոններում դասավանդած և դասավանդող այլ հոգեբանների գրքեր:

Ցուցադրության բացմանը ելույթ ունեցավ ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը: Նա Մանկավարժական համալսարանի Հոգեբանության ֆակուլտետի շրջանավարտ է, հիշում է՝առաջին գիրքը նվեր է ստացել Մ. Մազմանյանից: Խոսելով հոգեբանական գիտության զարգացման ու շարժընթացի մասին՝ ռեկտորը հիշեց ոլորտի բոլոր երախտավորներին ու նվիրյալներին՝ փաստելով հոգեբանների վառ գունապնակի ազդեցությունն իր անհատականության և համալսարանում հոգեբանական ավանդույթների ձևավորման վրա:

«Մանկավարժական համալսարանում մանկավարժության և հոգեբանության առաջնորդությունը պայմանավորված է մանկավարժական առաքելությամբ»,-ամփոփեց Ս. Գևորգյանը:

Հոգեբանության ասպարեզի, Հայաստանում և Մանկավարժական համալսարանում նրա զարգացման դրսևորումների ու հոգեբանների տարբեր սերունդների մասին խոսեց հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կամո Վարդանյանը: Ֆակուլտետի դեկան Ռուզան Պետրոսյանը հիշեց իր ուսումնառության տարիները բուհում, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Կարապետյանը խոսեց հոգեբանական հարուստ գրական ժառանգության և ժամանակակից աշխարհում ընդունված ապացուցողական հոգեբանության մասին:

Ելույթ ունեցան հոգեբանության ամբիոնի վարիչ Մարիաննա Ավետիսյանը և դոցենտ Հակոբ Թադևոսյանը, ով Հոգեբանության ֆակուլտետի առաջին շրջանավարտներից է:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանը փաստեց՝ լեզվի ծագման հիմքում հոգեբանությունն է, իսկ հոգեբանությունը մեծ սնունդ է տալիս լեզվաբանությանը:

«Այստեղ են ձևավորվել հոգեբանության ավանդույթները և հիմունքները»,-ասաց դոցենտ Լևոն Սարգսյանը:

Հոգեբանական գիտությանը նվիրված ելույթները իսկական դաս են ուսանողների համար՝ նկատեց գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցը:

Դասավանդման...

➢2 ները տարբեր են. ուսուցչի համար ոչ միայն դժվար է միաժամանակ նույն դասարանում աշխատել տարբեր տարիքի երեխաների հետ, այլև համընդհանուր ներառման պայմաններում կիրառել դասավանդման ճիշտ մեթոդիկա:

«Սովորաբար դասավանդման գործընթացում ես առավելությունը տալիս եմ գործնական բնույթի առաջադրանքներին: Աշխատանքները բազմազան են լինում, բայց ես սիրում եմ խմբային աշխատանքը, երբ ուսանողները ակտիվ են լինում: Ընդհանուր հարցման ընթացքում ուսանողների խմբային ակտիվությունը շատ կարևոր է»,-ասում է մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսորի պաշտոնակատար Գայանե Խալաթյանը:

Ինտերակտիվ ուսուցման մեթոդը Գ. Խալաթյանը կիրառում է և՛ դասախոսությունների ընթացքում, և՛ գործնականի դասերին: Ինտերակտիվ ուսուցումն իր կենսափորձում կարևոր տեղ ունի. «Ես դա կիրառել եմ անգամ հին մեթոդական դասընթացներն իրականացնելիս և հիմա նույնպես: Երբ ասում են, թե ավանդական ուսուցումն ուսանողակենտրոն չի եղել կամ աշակերտակենտրոն, ես դրա հետ համամիտ չեմ: Դա կախված է ուսուցչից ու դասախոսից. դասախոսն այնպես է կազմակերպում դասը, որ դառնա ուսանողակենտրոն, ուսուցիչն այնպես է կազմակերպում դասը, որ դառնա աշակերտակենտրոն»:

Գայանե Խալաթյանը նախկինում երկար տարիներ աշխատել է հանակրթական դպրոցում, զուգահեռ՝ նաև համալսարանում, դեռևս դպրոցում աշխատելու ընթացքում գիտական կոչումներ է ստացել և շատ բան գիտի իր տարիների փորձից:

«Երբ նոր էի մտել դպրոց, ինձ համար մեթոդ էի մշակել,-շարունակում է Գ. Խալաթյանը,-նոր դասի հաղորդումն անգամ պետք է անես աշակերտի միջոցով: Աշակերտը պետք է վերջում եզրակացնի՝ ինչի հանգեցինք մենք: Նույնը ես անում եմ համալսարանում»:

Գ. Խալաթյանը վստահեցնում է՝ դպրոցի կենսափորձն իրեն շատ է օգնում համալսարանում դասավանդելիս: Դասագործընթացում իր կիրառած հնարներն ու մեթոդները ուսանողներն օգտագործում են իրենց մանկավարժական պրակտիկայի ընթացքում: Դասախոսը նաև փաստում է, որ դասի ընթացքում նախապես պլանավորածը շատ հաճախ փոխվում է՝ ելնելով ուսանողների հարցումներից:

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուզան Դոլուխանյանն էլ հավելում է, որ գրականության դասին ավելի հաճախ է փոխվում պլանավորման ընթացքը, իսկ «ակտիվ մեթոդները նորություն չեն. դրանք անտիկ շրջանից եկած մեթոդներ են և հատկապես թափ ստացան 20-րդ դարի 30-ական թվականներին ակտիվ խաղերի միջոցով»:

«Ես սովետական դպրոց եմ ավարտել, հիշում եմ, որ ավանդական դասերն էլ վարելիս նման մեթոդներ էինք կիրառում, պարզապես երբեմն հինը ներկայացվում է նոր անվանումներով ու ձևակերպումներով: Ավանդականը նույնպես հետամուտ է լինում այդ նպատակին՝ ունի և՛ խթանում, և՛ իմաստի ընկալում, և՛ կշռադատում»,-ասում է Ռ. Դոլուխանյանը:

Ուսանողական համակազմի մասին խոսելիս նա ասում է, որ classroom համակարգը լայն հնարավորություններ է ընձեռում. դասախոսը նյութը նախապես տեղադրում է, և ուսանողները դասի են ներկայանում արդեն պատրաստված, հիմնական նյութը յուրացրած, ինտերակտիվ քննարկում է լինում՝ տարբեր մեթոդների կիրառմամբ:

«Բանասիրությունն այն ոլորտն է, որն ինքնաբերաբար թելադրում է իր մեթոդները հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում»,-ընդգծում է Գ. Խալաթյանը՝ նկատելով, որ վերջին տարիներին դպրոցական համակարգում մեթոդական ուղղվածությունը մի փոքր ակտիվացել է, ուսուցիչների մի խումբ էլ ծրագրերի վրա է աշխատում:

Ռ. Դոլուխանյանը փաստում է. «Մեր ուսանողները պրակտիկայի ընթացքում դպրոցներում կիրառում են մեր դասավանդման մեթոդները, բավականին արդյունավետ դասեր են վարում, և ուսուցիչները նրանցից սովորելու բան ունեն:

Երբեմն փաստերն ավելի խոսուն են. կան հին սերնդի ուսուցիչներ, որոնք դեռևս աշխատում են դպրոցում, նրանք տարիների փորձառությամբ իրենց գիտելիքները խորացրել են, բայց չեն ընդունում նոր մեթոդական համալիրը և դասավանդում են ավանդական մեթոդներով: Մենք ավանդականն ու հինը զուգակցում ենք սովորաբար, այս նորը հնի կրկնությունն է, ուղղակի մի փոքր ճիշտ պետք է իրականացնել, նախկինում էլ միասնական ինտերակտիվ ուսուցում է եղել, բայց համարել են ուսուցչակենտրոն:

Կան նաև նորավարտ ուսուցիչներ, որոնք նոր տեխնոլոգիաների օգնությամբ դասը հետաքրքիր են դարձնում, որը աշակերտին գրավում է: Դա ևս օգտավետ է»:

Ուսուցչի կամավոր ատեստավորման մասին խոսելիս Ռ. Դոլուխանյանն ասում է՝ ուսուցիչն ամենախոցելի խավն է, նրա վարկանիշը պետք է բարձրացնել, իսկ Գ. Խալաթյանը՝ շեշտում՝ ուսուցչի ստեղծագործական աշխատանքի դիմաց աշխատավարձի բարձրացումը շատ կարևոր է և անհրաժեշտ, բայց կամավոր ատեստավորումը շատերին մղում է միայն սոցիալական վիճակի բարելավմանը, և այս գործընթացը կարծես չի նպաստում ուսուցչի կոչման վերարժևորմանը:

Իսկապես 21-րդ դարի ուսուցչի առջև ծառացած մարտահրավերները շատ են ու բազմազան. պետք է նրանց համակողմանի աջակցություն ցուցաբերել՝ համալսարան-դպրոց-համալսարան եռակողմ կապի ամրապնդումով՝ դասավանդման մեթոդիկաների ճիշտ կիրառումը դարձնելով արդյունավետ դասի իրականացման ամենակարևոր բաղադրիչը:

Միլվա ԱՍՐՅԱՆ

ԼՐԱՀՈՍ

ԱՐԺԱՆԱՑԱՎ ՄՐՑԱՆԱԿԻ

Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի ռեժիսուրայի ամբիոնի դասախոս Քրիստինե Պողոսյանն արդեն 21-րդ անգամ անցկացվող «Արտավազդ-2022» ամենամյա «Արտավազդ» մրցանակաբաշխությանն արժանացավ մրցանակի «Լավագույն թատերագիտական հոդված» անվանակարգում՝ «Հաջողված թռիչք»

հոդվածի համար: Անվանակարգն առաջին անգամ էր ներկայացվում մրցանակաբաշխությանը. Մանկավարժականի դասախոս Քրիստինե Պողոսյանը «Լավագույն թատերագիտական հոդված» անվանակարգի առաջին մրցանակակիրն է: Նման մրցանակի նա առաջին անգամ է արժանանում:

«Սկզբնական կրթության հիմնախնդիրները»

Բուհի 100-ամյակի շրջանակում համալսարանական ֆակուլտետները կազմակերպում են գիտաժողովներ, որոնք նվիրում են ոլորտի հիմնախնդիրների քննարկմանը: Հերթական գիտաժողովը, որը միջազգային ընդգրկում ուներ, նվիրված էր սկզբնական կրթության հիմնախնդիրներին: Սկզբնական կրթության ֆակուլտետի գիտաժողովին մասնակցում էին դասախոսներ, ասպիրանտներ և ուսանողներ:

Գիտաժողովին բացման և ողջույնի խոսք ասացին ՀՊՄՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը և Սկզբնական կրթության ֆակուլտետի փոխդեկան Լուսինե Պողոսյանը:

Լիագումար նիստում հետաքրքիր զեկուցումներ ներկայացրին Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտներ Լիլիթ-Տեր Գրիգորյանը և Եվա Մնացականյանը:

Դոցենտ Լիլիթ Տեր-Գրիգորյանն իր «Հայոց լեզու և գրականություն» դասընթացը որպես տարրական դպրոցի ուսուցչի արժեհամակարգի ձևավորման միջոց» զեկուցման մեջ արժևորեց առարկան և նրա դերը տարրական դպրոցի ուսուցչի արժեհամակարգում: Նա անդրադարձավ այն հարցին, թե դասընթացի առանձնահատկությունը պետք է պայմանավորված լինի ազգային ու պետական գաղափարախոսությամբ, ելնի շատ կոնկրետ ռազմավարական շահերից, ելնելով մեր երկրի առջև ծառացած մարտահրավերներից՝ պետք է փոխվեն մեր կրթադաստիարակչական առաջնահերթությունները:

Դոցենտ Եվա Մնացականյանը ներկայացրեց Թումանյանի «Քաջ Նազարը»՝ Նիկոլ Աղբալյանի գնահատմամբ՝ բացահայտելով նազարականության համախտանիշի աղբալյանական ձևակերպումներն ու վերջինիս վերաբերմունքը՝ մի՞թե հնարավոր չէ ձերբազատվել հասարակությանը համակած այդ ախտից:

Լիագումար նիստում լսեցին ևս երկու՝ ասպիրանտ Սյուզի Գինոսյանի և մագիստրոս Ռիմա Մուրադյանի զեկուցումները՝«Մանկավարժական սիներգետիկայի էությունը մասնագիտական կրթության ոլորտում» և «Մաթեմատիկայի և շախմատի միջառարկայական կապերը՝ ինտեգրված ուսուցման համատեքստում»:

Գիտաժողովն իր աշխատանքը շարունակեց մասնախմբերում:

ԲՈԼՈՐԸ ՆԱՅՈՒՄ ԵՆ, ԻՍԿ ԱՐՎԵՍՏԱԳԵՏԸ ՏԵՍՆՈՒՄ Է

ՄԵՐ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ՀՊՄՀ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ ԱՐԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԵՏ

-Հարգելի պարոն Հակոբյան, Հայաստանի նկարիչների միության սրահում բացված հոբելյանական ցուցահանդեսը՝ նվիրված ՀՊՄՀ 100-ամյակին, լավագույններից էր, որտեղ ներկայացվել էին Մանկավարժական համալսարանի նկարչության բաժնի դասախոսների ստեղծագործական աշխատանքները: Ի՞նչ կասեք այդ կապակցությամբ:

-Շուրջ վեց ամիս պատրաստվել ենք այդ ցուցահանդեսին: 40 արվեստագետ մասնակցեց ցուցահանդեսին, ներկայացվեց 122 աշխատանք: Պետք է նշեմ, որ այն և՛ պատվաբեր էր, և՛ պարտավորեցնող, որովհետև մեր աշխատանքները ներկայացնում էինք ոչ միայն արվեստասեր հասարակությանը, այլև մեր ուսանողներին: Դասերի ընթացքում, արվեստանոցային միջավայրում, ուսանողները շատ ժամանակ շփվում են դասախոսի մանկավարժական մեթոդների հետ, բայց նրանց ստեղծագործություններին ծանոթ չեն: Սա ևս մեկ առիթ էր, որպեսզի ուսանողները մոտիկից ծանոթանան իրենց վարպետների ստեղծագործություններին:

Այցելուները պետք է գնահատեն ցուցահանդեսի հաջողվածությունը, սակայն ես՝ որպես ոլորտի ներկայացուցիչ, պետք է ասեմ, որ բավականին հաջողված ցուցահանդես էր, և մենք կարողացանք Նկարիչների միությունում մեր ստեղծագործություններով պատշաճ ներկայացնել հարազատ բուհի 100-ամյակը, ինչու չէ, նաև ցույց տալ արվեստասեր հասարակությանը, որ ժամանակին մեծանում մի շարք արվեստագետներով հայտնի մեր ֆակուլտետում այսօր էլ բավականին ճանաչված արվեստագետներ են աշխատում, դաստիարակում և կրթում նոր սերնդին:

Ցուցահանդեսը բազմաբնույթ էր. ներկայացված էին գեղանկարչական աշխատանքներ, իհարկե դրանք գերիշխող էին, գրաֆիկական և դեկորատիվ կիրառական արվեստի տարբեր ճյուղերի ստեղծագործություններ՝ գոբելեն, բատիկա, փայտի փորագրություն և մետաղյա աշխատանքներ… Ցուցադրությունը նաև ներկայացնում էր, թե ինչ մասնագիտությունների վարպետներ են մեզ մոտ աշխատում:

-Ի՞նչ են տալիս նման ցուցահանդեսները ճանաչելիությունից և մարդկային շփումներից զատ:

-Ամենակարևորը՝ գեղագիտական ճաշակ են սերմանում այցելուների մեջ: Այսօր ցուցասրահները բավականին շատ են և միշտ չէ, որ մեծ թվով այցելուներ են ունենում: Բայց պետք է ասել, որ մեր ցուցահանդեսը բավականին մարդաշատ էր, այցելուների նման հոսքի միշտ չէ, որ հանդիպում ես նման ցուցահանդեսներին:

-Որքանո՞վ են դիմորդները նախընտրում Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի նկարչության բաժինը: Ինչո՞վ է այն գրավիչ հանրապետության արվեստի այլ կրթօջախներից:

- Ի տարբերություն Գեղարվեստի ակադեմիայի, մենք տալիս ենք նաև մանկավարժի որակավորում, և դա շատ ավելի գրավիչ է: Պետք է հավելեմ, որ որքան էլ բարդ լինի արվեստագետի ուղին, շատ ծնողներ հակված են իրենց երեխաներին տալ այնպիսի մասնագիտությունների, որոնք մղում են դեպի գեղեցիկը:

-Արդյո՞ք կարելի է ասել, որ Մանկավարժականը նկարչության յուրահատուկ դպրոց է, Ի՞նչ հետաքրքիր ավանդույթներ ունեք:

-Ֆակուլտետը շատ ավանդույթներ ունի: Որքան էլ ժամանակները փոփոխական են, որը բերում է նորարարական արվեստ, մենք նախընտրում ենք ուսանողին տալ ակադեմիական կրթվածություն. սա այբուբենն է, որը հետագայում շրջանավարտը պետք է կարողանա սովորեցնել իր աշակերտներին: Դրա համար մեր բակալավրիատի և մագիստրատուրայի, մասնավորապես բակալավրիատի պլաններում, մանրակրկիտ ուսումնասիրված է գիծը, գույնը, այդ հեռանկարի ուսուցումն ու մեթոդները, կոմպոզիցիան, որով մենք կարողանում ենք գրագետ մանկավարժ-արվեստագետներ թողարկել:

Ավարտելուց հետո նրանք արդեն կարող են աշխատել նախընտրած ուղղություններով:

-Ունե՞ք վիճակագրություն՝ ուր են գնում Ձեր շրջանավարտներն ավարտելուց հետո՝ հանրակրթական դպրոցնե՞ր, արվեստի կրթօջախնե՞ր, թե ուղղակի զբաղվում են նկարչությամբ: Այս մասնագետների պահանջարկ կա՞:

-Պահանջարկ կա, ցավոք ոչ բոլոր շրջանավարտներն են դպրոց մտնում, ինչը պայմանավորված է մի շարք գործոնների առկայությամբ. այս մասնագիտության ուսուցչի պահանջ հիմնականում կա մարզային դպրոցներում, իսկ շրջանավարտի համար հեռավորությունն արդեն խնդիր է:

Մենք ուրախանում ենք, երբ շրջայցերի ժամանակ տեսնում ենք մեր նախկին ուսանողներին որպես կայացած ուսուցիչներ, բացի այդ, նաև կայացած արվեստագետներ, և՛ միության, և՛ ազգային պատկերասրահի կազմակերպած ցուցահանդեսներում հանդիպելով մեր շրջանավարտների անուններին՝ հպարտանում ենք: Դա մեզ համար ամենամեծ պարգևն է:

-Որպես նկարիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ կասե՞ք ինչն է նկարչին ավելի շատ ճանաչում բերում՝ թեմայի, ասելիքի, գույների ու ոճի ընտրությո՞ւնը, թե՞ այդ բոլորի միասնությունն ու ներդաշնակությունը:

-Այս հարցին մասնագիտորեն մոտենամ: Ցավոք, շատ նկարիչներ հաճախ բարձրաձայնում են, թե նոր ոճ են ստեղծել…Դա ծիծաղելի է. մի քանի տարում նոր ոճ չի ստեղծվում, և դա անհատով չի պայմանավորված: Դա դպրոց է, ավանդույթներ են, որ ձևավորվում են ավելի երկար ժամանակահատվածում: Ես կասեի՝ նկարչի համար ամենակարևորը ինքնատիպությունն է, իր սեփական ձեռագիրն ունենալը: Փորձենք ավելի զուսպ լինել, որովհետև արվեստագետին գեղեցկացնում է համեստությունը: Որովհետև կարելի է ասել՝ և՛ նկարչի, և՛ դեկորատիվ-կրառական արվեստի, և՛ մյուս, ճյուղերի համար հետաքրքիր, ինքնատիպ ձեռագիրն արդեն արդյունք է և գնահատական: Եթե մենք դրան հասնում ենք՝ ուրեմն կայացած արվեստագետ ենք:

-Լինո՞ւմ է, որ ուսանողը գերազանցում է դասախոսին, այդ դեպքում ի՞նչ դեր է խաղում դասախոսի խանդը….

-Լավ հարց էր, մանավանդ որ արվեստագետի մոտ խանդը նկատելիորեն առկա է: Բայց գիտենք նաև, որ աշակերտը մշտապես պետք է գերազանցի վարպետին: Շատ ժամանակ մենք ավելի հպարտանում ենք, որ մեր նախկին սանը մեծ հաջողությունների է հասնում: Ինչ-որ տեղ դա հարաբերական է, դժվար համեմատելի… դա ժամանակն է ցույց տալիս:

Աշակերտի հաջողությունը նաև իր ուսուցչի հաջողությունն է, վերջինս պետք է ծնողական, հայրական վերաբերմունք դրսևորի. և այդպես էլ կա:

-Դասավանդման մեթոդներն այսօր բավարարո՞ւմ են դասախոսին, ուսանողին:

-Մեթոդներն այսօր գլոբալ առումով կարծես թե երկուսն են՝ ակադեմիական դասավանդման սկզբունքները, որի մասին խոսեցինք, և մասնավորապես, արևմտյան երկրներում շեշտը դրված է ազատության մեթոդի վրա: Իմ կարծիքով այդ երկուսի համադրումը պետք է լինի իդեալականը, որին մենք գնում ենք: Դուք գիտեք, որ մենք համագործակցում ենք Ցյուրիխի արվեստների համալսարանի հետ, որի մասնագետները ևս գտնում են, որ որ երկուսի համատեղումն ավելի ճիշտ է: Լսարանում նստելուց դուրս թերևս պետք է գտնել նոր լուծումներ՝ հաշվի առնելով նաև ազգային մենթալիտետը: Ցանկացած նոր դա դեռ լավ չէ, հինը պահելը նույնպես լավ չէ, մենք պետք է գնանք առաջ՝ հաշվի առնելով նաև զարգացած երկրների մեթոդները, բայց չմոռանալով մեր ազգայինը, մեր ավանդույթները:

Այս հարցի շուրջ մենք զրուցել ենք նաև Ֆինլանդիայի մեր ընկերների հետ: Մեր ֆակուլտետ են այցելել Ռուս արվեստագետ-մանկավարժների միության անդամները, սերտ կապեր ունենք Մոսկվայի մանկավարաժական համալսարանի հետ. պետք է ասել, որ ռուսական կրթական մեթոդները շատ ավելի դասական են և մոտ են մեր մեթոդներին, սակայն, ինչպես ասացի, պետք է ուսումնասիրել նաև արևմտյան մեթոդները և վերցնել լավը:

-Ի՞նչ կմաղթեիք մեր ապագա նկարիչներին:

- Երբ արտերկրում փողոցում կանգնած էտյուդ ես անում, մանուկ ու մեծ մոտենում են, հաճելի խոսքեր ասում, նկարվում նկարչի հետ. սա շատ շոյող հանգամանք է արվեստագետի համար… Ես կմաղթեի մեր ուսանողին, ապագա նկարիչներին, արվեստագետներին՝ այդ միջավայրում գործեն, գնահատվեն, սիրվեն հասարակության կողմից, ինչն ավելի կոգևորի և կխթանի նրանց ստեղծագործական միտքը:

-Ուրիշ ինչի՞ մասին կուզեիք խոսել:

-Բնության մասին: Առանց բնության չկա նկարչություն: Մենք մեր ուսանողներին հաճախ ենք տանում բնության մեջ նկարելու, թեև արվեստանոցային միջավայրն էլ կարևոր է: Բնությունը, պլեները շատ կարևոր են, և մենք մեր ուսանողների մեջ փորձում ենք սեր և ճանաչողություն արթնացնել դեպի բնությունը: Որովհետև բոլորը նայում են, իսկ արվեստագետները՝ տեսնում:

Հարցազրույցը՝
Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԱՅՑ

Մանկավարժական համալսարանը 100 տարեկան է, և բոլոր ֆակուլտետները յուրովի են տոնում հոբելյանը:

Համագործակցելով Երևանի Գայի անվ. N129 հիմնական դպրոցի հետ, Կուլտուրայի ֆակուլտետի երաժշտության ամբիոնը կազմակերպել էր համերգային ծրագրով այց:

«Արդեն 100 տարի է, ինչ մեր բուհում կրթվում են հասարակության արժանի մաս կազմող բազմաթիվ ուսանողներ, ասել է թե Մանկավարժական համալսարանն իր կարևոր տեղն ունի Հայաստանի կրթական, գիտական և մշակութային կյանքում»,- այս խոսքերով սկսվեց համերգային ծրագիրը, որը կրում էր «Կա՛նք: Պիտի լինե՛նք: Ու դեռ - շատանա՛նք» խորագիրը:

Ուսանողների մեջ հուզմունք ու լարվածություն չկար, ասում են՝ մասնագիտության բերումով հաճախ են ելույթներ ունենում, վաղուց սովորել են չլարվել:

Համերգի մեկնարկն ազդարարեց «Զվարթնոց» քանոնահարների անսամբլը (գեղ. ղեկ.՝ ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Հասմիկ Լեյլոյան), որը կատարեց երեք ստեղծագործություն: Աղջիկները վերջերս Գյումրիում կայացած «Վերածնունդ» միջազգային փառատոնում արժանացել էին «Գրան Պրի» մրցանակի: Քանոնահարների անսամբլին հաջորդեց Կուլտուրայի ֆակուլտետի երաժշտության ամբիոնի ազգային նվագարանների նվագախմբի կատարումը (գեղ. ղեկ.՝ ՀՀ վաստակավոր արտիստ, պրոֆեսոր Նորայր Դավթյան):

Դիրիժորությամբ հանդես եկան 4-րդ կուրսի ուսանողներ Նվարդ Ավետիսյանը և Նոնա Ղազարյանը, նաև շրջանավարտ Ազատ Ասլանյանն՝ իր հեղինակային «Ժամանակ» ստեղծագործությամբ:

Դուդուկահարների անսամբլը (դասախոս՝ պրոֆեսոր Հրաչյա Նազարյան) կատարեց Խոսրովիդուխտի՝ 8-րդ դարում գրված «Զարմանալի է ինձ» ստեղծագործությունը:

Երևանյան ջերմ ռիթմեր բերեց ջազ նվագախումբը (գեղ. ղեկ.՝ ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Երվանդ Երզնկյան)՝ կատարելով Արտեմի Այվազյանի «Զա՜ն, Երևան» ստեղծագործությունը:

Դհոլահարների (ղեկ.՝ Արազ Օրդինյան) ՝ «Հայկական ռիթմեր» կատարման հետ համադրմամբ հիանալիորեն փայլեց փողային նվագախումբը (գեղ. ղեկ.՝ դոցենտ Կոլյա Մարտիրոսյան), որը կատարեց Արա Գևորգյանի «Արցախ» ստեղծագործությունը:

Հաջորդաբար հնչեցին Ռոբերտ Պետրոսյանի «Արևելյան պար» և Էդգար Հովհաննիսյանի «Սարդարապատ» ստեղծագործությունները:

Համերգի վերջում Կուլտուրայի ֆակուլտետի երաժշտության ամբիոնի գործիքային կատարողականության բաժնի ուսանողները նվագեցին Ա. Մարտիրոսյանի «Հայկական բանակը»:

Ողջույնի խոսքով հանդես եկավ Կուլտուրայի ֆակուլտետի դեկանի տեղակալ, բ.գ.թ., դոցենտ Արտաշես Մարտիրոսյանը: Նա իր խոսքում նշեց հանրակրթության ոլորտում աշակերտների գեղագիտական դաստիարակության ոչ այնքան բարձր մակարդակի մասին, համառոտ ներկայացրեց համալսարանի պատմությունը և Կուլտուրայի ֆակուլտետի դերակատարումը 100-ամյա պատմության մեջ:

Համերգի գեղարվեստական ղեկավար, երաժշտության ամբիոնի վարիչ Արա Գևորգյանն էլ նշեց, որ այսպիսի համերգային այցերն ունենալու են շարունակական բնույթ:

ԺԵՆՆԻ ԱԲԳԱՐՅԱՆ

Դասախոսություն. Պետրոս Դուրյանի «Տրտունջքը»

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 100-ամյակին ընդառաջ մարտի 10-ին իրականացավ ՀՊՄՀ հենակետային վարժարանի 10-րդ դասարանի (ուսուցիչներ՝ Օֆելյա Ավագյան, Աստղիկ Բոյաջյան) և Հ. Ավետիսյանի անվան №74 դպրոցի 8-րդ դասարանի (ուսուցիչ՝ Սիրանուշ Հակոբյան) սաների համար նախատեսված այցելությունը «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոն: Նրանց հյուրընկալել էր կենտրոնի տնօրենը՝ Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Սուրեն Դանիելյանը, որը հայ գրականագետ է, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի գրողների միության անդամ:

Պարոն Դանիելյանի մատուցմամբ ներկայացվեց Դուրյանի քնարերգությունը, մասնավորապես անդրադարձ կատարվեց «Տրտունջք» բանաստեղծության պատմությանն ու ակունքներին, կարևորվեց ստեղծագործության էությունը, վերջինիս հոգեբանական և գեղագիտական արժեքը:

Այո՛, շատերն են խոսել և գրել «Տրտունջք»-ի մասին, սակայն ասելիքը չի սպառվում այդ հազվագյուտ երկի վերաբերյալ, որովհետև, ինչպես Հր. Թամրազյանն էր կարծում, «հավերժական երկերը հավերժական նյութ են նաև գրականագիտության համար...»:

Անդրադառնալով «Տրտունջք»-ը վերլուծող Սուրեն Դանիելյանի ներկայացմանն ու համոզմունքին՝ նկատում ենք, որ նա բանաստեղծության սկիզբը սովորաբար տեսնում է սոսկ որպես Դուրյանի հրաժեշտի մեղմ խոսքը՝ ուղղված Աստծուն ու արևին:

Քննարկմանը ներկա սաների կարծիքով՝ վիճակը մի փոքր փոխվում է «Տրտունջք»-ի սկզբի մեջ, երբ փորձում ենք, բացի հրաժեշտի տրամադրությունից, տեսնել նաև խռովք: Նրանք այն կարծիքին էին, որ բանաստեղծի հետագա խոսքը գերազանցապես դառնում է գեղարվեստական պատկերավոր խորհրդածություն:

Ըստ Սուրեն Դանիելյանի՝ հրաժեշտը արևին բանաստեղծի՝ իրական կյանքից մոտալուտ բաժանման թաքուն ցավն է, որ կուտակվել է նրա սրտում, ուրեմն նրա «մնաք բարով»-ը իր հոգու՝ վերև «պլպլացող» արևին այլ բան չէ, քան վաղաժամ վշտագին ու կսկծահար հրաժարումն աշխարհից: «Մնաք բարով»-ը ջերմությունից զերծ մնացած պատանու սրտի հառաչն է Արևին:

Բանաստեղծության վերլուծությունից պարզ է դառնում, որ Դուրյանի կրած անլուր տառապանքները նրան հասցրել են այնտեղ, որ նա հոգեկան և ֆիզիկական տագնապի մեջ ամբողջովին կորցրել է հավատն աստվածային կարեկցանքի հանդեպ և «մնաք բարով» ասելով Աստծուն՝ նաև այդ կերպ արտահայտել է իր դժգոհությունը նրանից:

«Տրտունջք»-ի տողերը շիկացած են մարդկային տառապանքով և Աստծու դեմ ուղղված դառնակսկիծ հեգնանքով ու հանդուգն խրոխտանքով:

Ամփոփելով վերլուծական աշխատանքը՝ պարոն Դանիելյանի ուղղորդմամբ ձևավորվեց համոզմունք, որ Դուրյանը ստեղծել է իր խորհրդաբանությունը, որտեղ աստղերը թշվառ հոգիների ողբագին անեծքն են, որ թռել են՝ այրելու ճակատը երկնքի, որը խնամող ու հոգացող է, մխիթարող և սփոփող, դեպի որն ուղղված են երկրային իղձերն ու ցանկությունները՝ որպես փրկության միակ հնարավորություն:

Դասախոսության ավարտին երկուստեք պայմանավորվածություն ձեռք բերվեց՝ շարունակաբար այցելելու կենտրոն և մասնակցելու այսպիսի ուսանելի հանդիպումների:

Ներկա գտնվողները համաձայնեցին, որ գիտելիքը համալրելու և կարևորելու համար նմանօրինակ այցերի պարբերաբար կազմակերպումն ուղղակի անհրաժեշտ է:

Օֆելյա ԱՎԱԳՅԱՆ

ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ԱԶԳԱՅԻՆԸ

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի ընթացիկ դասերին զուգահեռ մարտի 13-ին անցկացվեց հետաքրքիր բաց դաս՝ նվիրված հայ մեծանուն նկարիչ, Հայաստանի նկարիչների միության անդամ Համազասպ Մխիթարյանի (ՀԱՄՈՒԶ) գործունեությանը:

Այդ օրը դպրոցի տնօրենի՝ մանկ. գիտ. թեկնածու Շողիկ Փահլևանյանի հրավերով միջոցառմանը մասնակցեցին նաև վարպետի որդին՝ Էդգար Մխիթարյանը, և թոռը՝ Լևոն Մխիթարյանը: Վերջինը «Վերածնունդ» դպրոցի լավագույն սաներից է:

Տեսակոնֆերանսի ձևաչափով աշակերտներն ու ծնողները, ուսուցչական համակազմը հնարավորություն ունեցան առցանց ձևաչափով շփվել Համազասպ Մխիթարյանի և նրա տիկնոջ՝ Անահիտ Սահակյանի հետ, ովքեր ապրում են Երևանում: Ընդգծենք, որ Էդգար Մխիթարյանի շնորհիվ կիրակնօրյա դպրոցի սաներին բացառիկ հնարավորություն ընձեռվեց տեսնել նկարչի գեղեցիկ ու ինքնատիպ աշխատանքների բնօրինակները, ինչպես նաև լսել նրա անցած ուղու պատմության, կազմակերպած բազմաթիվ ազգային, տարածաշրջանային և միջազգային ցուցահանդեսների մասին (այդ թվում՝ Ռուսաստանում, Գերմանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրալիայում և այլն):

Հանդիպումն անցավ ջերմ մթնոլորտում, նկարչին բազմաթիվ հարցեր ուղղվեցին, հնչեցին փոխադարձ շնորհակալական խոսքեր, բարեմաղթանքներ: Յուրօրինակ այս հանդիպումն ավարտվեց աշակերտների գրական և երաժշտական կատարումներով:

Հավելենք, որ 2020—2021 ուսումնական տարվա ամառային արձակուրդների ընթացքում «Վերածնունդ» դպրոցի սաները տնօրեն Շ. Փահլևանյանի ուղեկցությամբ Երևանում հյուրընկալվեցին Համազասպ Մխիթարյանին, ծանոթացան նրա հետ, մասնակցեցին վարպետաց դասին:

Հայաստանից դուրս հայապահպանությանն ուղղված միջոցառումները շարունակական են. Մոսկվայի կիրակնօրյա դպրոցի սովորողներն իրենց մեջ կրում են ազգային ոգին՝ հայրենանվեր ուսուցիչների օգնությամբ պահպանելով ազգային ավանդույթները:

Մոսկվա
«Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոց

ՍԱՀՄԱՆԻՑ ԱՅՍ ԿՈՂՄ

Կյանքը եռո՞ւմ է: Սահմանից այս կողմ աշխարհն ուրիշ է. այստեղ մարդիկ են՝ իրենց ամենօրյա հոգսերով զբաղված, մյուս կողմում անվերջ կռիվ է, թեև սառն ու անձայն, բայց այնտեղ միշտ պատերազմ է, պատերազմ, որն ապրում է ամեն պահի սահմանը հսկող մեր զինվորը:

Ես սահմանապահ եմ...Ծնվել եմ Շամշադինի շրջանում: Կանգնած սահմանին՝ հայ զինվորի թիկունքում, տեսել եմ պատերազմ ու արկերի ընկնելը տանս մոտ: Կարճ ասած՝ գիշերը աղոթքը շուրթիս անդորր երկնքի սպասող եմ:

Հայրենիքն այն դիրքն է և այն գյուղը, որտեղ ապրում ես և որը պահում քո իսկ արյան գնով: Այնքան գեղեցիկ է ասված. «Հայրենիքը սկսվում է սահմանից»:Հայրենիքն իրապես սկսվում է սահմանից, պարզապես հայրենիքի սկիզբը պահելու համար շատ կյանքեր և չապրած տարիներ են զոհաբերվում:

Ես հայ-ադրբեջանական սահմանի հյուսիս-արևելյան կողմում ծվարած մի փոքրիկ գյուղի բնակիչ եմ: Շատ լավ գիտեմ և զգում եմ, թե ինչ է նշանակում ապրել ամեն պահի պատերազմին սպասող սահմանի այս կողմում:

Այս կողմում ուրիշ կյանք կա. ես այդ կյանքը բաժանում եմ երկու խմբի կամ տեսակի: Առաջինն իր զինվորի ճամփին հավերժ սպասող մոր կյանքն է, երկրորդը՝ սահմանին կանգնած զինվորի համար աղոթող ու անհամբեր նրա տասնհինգօրյա վերադարձին սպասող ընտանիքի կյանքը:

Գիտե՞ք՝ իմ բաժին հացը կիսելիս անվերջ մտածում եմ սահմանին կանգնած հայրիկիս կուշտ լինելու մասին, իսկ գիշերը, երբ պետք է քնենք, տատս չի ծածկում տան դուռը՝ սպասելով, որ հայրիկը կգա...

Սահմանից այս կողմ լուռ պատերազմ է: Հազարավոր մարդիկ ամեն օր սպասում են այդ պատերազմին, որ ահա կսկսվի:

Չնայած այս ամենին՝ ես հպարտ կանգնած եմ իմ դիրքում, հողի վրա, քանի որ գիտեմ և վստահ եմ, որ սահմանին կանգնած են միշտ արթուն ու անսասան մեր հպարտ Զինվորները:

Միլենա ԱՎԱԼՅԱՆ
Տավուշի մարզ, Մովսեսի միջնակարգ դպրոց, 11-րդ դասարան

ՄԵԹՈԴԱՐԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ



Մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժության» 2-րդ կուրսի ուսանողները մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Արուսյակ Հովհաննիսյանի «Մանկավարժության հաղորդակցում» և «էթնոմանկավարժություն» դասընթացների շրջանակում մանկավարժության ամբիոնի դասախոսներին ներկայացրին դասի անցկացման իրենց մշակած մեթոդները: Ուսանողները 21 մեթոդները հանգամանորեն ներկայացրին «Մեթոդարան» փաթեթով:

Դոցենտ Արուսյակ Հովհաննիսյանի կարծիքով ուսանողների մշակած մեթոդները թերևս իրենց նախատիպը չունեն այլ բուհերում: Ուսանողները տարբեր մեթոդների ուսումնասիրման հիման վրա ստեղծեցին իրենց մեթոդները, որտեղ հստակ պատկերվում է նպատակը, ընթացքը, վերջնարդյունքը:

Ուսանողներ Լիլիթ Թումանյանի, Լուսինե Լազարյանի, Անուշ Հակոբյանի, Սոնա Հարունյանի, Լիանա Մարկոսյանի, Լիլիթ Պողոսյանի և Սիրանուշ Սահակյանի ներկայացրած մեթոդներն ուղղված են ինտերակտիվ ուսուցման և խմբային աշխատանքի ակտիվացմանը: Նրանք վստահ են՝ մեթոդները կարող են ձևավորել և զարգացնել սովորողների տրամաբանական մտածողությունը, քննադատական վերլուծության կարողություններն ու հմտությունները, համագործակցելու, հետազոտելու և ստեղծագործելու ունակությունները, ամրապնդել հիշողությունը:

Ուսանողների ներկայացրած «Հինգ մատների մեթոդ», «Արևի շողերը», «Չորսից մեկը», «Մտարշավ», «Տարվա եղանակները» և մյուս մեթոդները սովորողի համար դասն առավել հետաքրքիր, արդյունավետ, մատչելի ու դյուրին դարձնելու նպատակ են հետապնդում, որոնք կիրառելու ընթացքում հետագայում ավելի կմշակվեն:

Ուսանողներն այս մեթոդները մշտապես կիրառում են իրենց դասերի ընթացքում. նրանց կարծիքով դրանք ոչ միայն դպրոցական տարբեր տարիքի աշակերտների, այլև ուսանողների համար են:

Դոցենտ Արուսյակ Հովհաննիսյանն ասաց, որ ուսանողների հետ համագործակցության արդյունքում է ծնվել մեթոդները ներկայացնելու գաղափարը. «Յուրաքանչյուր դասի վերջում ուսանողներն ունեին հստակ մեթոդներով առաջադրանքներ, և այդ մեթոդները կարծես իրենց սպառել էին, որովհետև «Մանկավարժական հաղորդակցում» և «էթնոմանկավարժություն» առարկաների շրջանակներում ամեն դասախոսության վերջում կարծես թե կրկնվում էին դրանք: Իսկ առանց այդ մեթոդների, և՛ տեսական, և՛ գործնական աշխատանքները չեն կարող ձևավորել այն վերջնարդյունքները, որոնք չափազանց կարևոր են այսօր: Այդ մեթոդներով ձևավորվում են հմտություններ, կարողություններ, որոնք մենք ամփոփում ենք յուրաքանչյուր դասի վերջում: Գիտակցելով դրա կարևորությունը՝ ուսանողներն ուսումնասիրեցին մեթոդների դաշտը և ստեղծեցին իրենց սեփական մեթոդները»:

Դասախոսը լիահույս է՝ այս մեթոդները նպաստելու են ուսանողների՝ ապագա սոցիալական մանկավարժների անձնային և մասնագիտական որակների ձևավորմանը:

Ապագա սոցիալական մանկավարժ Լիանա Մարկոսյանը վստահեցրեց՝ ինքնուրույն հետազոտական աշխատանքի նպատակն էր՝ մշակել մեթոդներ, որոնք կնպաստեն դասի հետաքրքիր անցկացմանը, հիշողության կենտրոնացմանը, իսկ Սոնա Հարունյանի կարծիքով՝ մանկավարժական գործընթացում կիրառելով իրենց ստեղծած մեթոդները՝ զարգացնում են քննադատական մտածողությունը, նպաստում ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելուն:

Անուշ Հակոբյանն այս մեթոդների մշակումը համարում է իրենց փոքրիկ ներդրումը, որը կնպաստի հաղորդակցական կարողությունների և ստեղծագործական մտածողության ձևավորմանը, խոսքի զարգացմանը: Ուսուցիչները կարող են այս մեթոդների կիրառմամբ դասն ավելի դյուրին ու մատչելի դարձնել սովորողների համար:

Սոֆյա Նազարյանը «Սոցիալական մանկավարժ» մասնագիտության առաջին շրջանավարտն է, իր մասնագիտությամբ աշխատում է շուրջ 7 տարի և անչափ ուրախ է, որը մասնագիտությամբ աշխատում է շուրջ 7 տարի և անչափ ուրախ է, որը ընտրել է հենց այս մասնագիտությունը:

Մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աիդա Թոփուզյանը փաստեց՝ ընտրվել են մեթոդներ, որոնք արդիական են և ձևավորում են 21-րդ դարի հմտություններ, դրված են ճիշտ նպատակներ և վերջնարդյունքներ, և այդ առումով ուսանողները լավ աշխատանք են կատարել: Սակայն վերջինները պետք է կարողանան վերհանել իրենց իսկ ստեղծած մեթոդների թերությունները ու մարտահրավերները, նաև առաջինն իրենք կարողանան կիրառել այդ մեթոդները: Ա. Թոփուզյանը հարցեր ուղղեց ուսանողներին, օրինակ, ինչպիսի՞ արդյունք են ակնկալում տարբեր մակարդակ ունեցող սովորողների հետ աշխատելիս:

Ամփոփելով՝ մանկավարժության ամբիոնի վարիչն իր գոհունակությունն ու հպարտության զգացումն արտահայտեց ուսանողների և դասախոսի կատարած աշխատանքի հանդեպ՝ հորդորելով նմանատիպ մեթոդներ մշակել նաև իրենց մասնագիտության՝ սոցիալական մանկավարժի համար, իսկ ներկայացված մեթոդները տպագրել առանձին գրքով:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Գրատախտակի մոտ գալիս է...

Մեր կրթական ծրագրի անբաժանելի և կարևորագույն հատվածն է պրակտիկան, այս անգամ արդեն՝ կիրառական: Սա նշանակում է, որ դասարանի վերջում վախվորած նստելուլսելու շրջանն ավարտվեց: Հիմա դասարանում քո դիրքը գրատախտակի մոտ է՝ կանգնած, ուշադիր և սիրով, սիրով, սիրով:

Կիրառական պրակտիկան սկսվում է գարնան սկզբին, ասել է թե՝ գարնանամուտին: Սա ուրախալի փաստ էր, մինչև այն պահը, երբ զգացինք, որ գարունը տաք չէ, իսկ որոշածդ գույները միայն հոգում են լինելու և ոչ հագուստի տեսքով:

Երկրորդ հարկում եմ: Սպիտակ վերնաշապիկով եմ, ինչպես բոլոր կարևոր օրերին: Մանկավարժության սիրելի դասախոսն ասել է, որ ամեն օր դասարան մտնելուց առաջ պետք է մտածել՝ ինչպես բարևել աշակերտներին: Մտածում եմ՝ ինչպես բարևել, ինչպես սկսել դասը, ինչպես, ինչպես...

մտածել, որ հպարտ լինելու փոխարեն պիտի մտահոգ լինել: Իր բառերով ասած՝ պետք է մի փոքր ավելի քիչ հպարտ լինել ու շատ աշխատել: Նրանք դեռ Խորենացու մասին շատ չգիտեն, բայց Նարեկը ազգային սնապարծությունից զերծ մնալու դասը սովորել ու հասկացել է: Շատ լավ է հասկացել:

Սրտի թրթռոց, վախ, անհանգստություն... փուչ խոսքեր են. անհետանում են, երբ նյութի հետ գործ ունես: Հայոց լեզվից ենք խոսում, բայ եմ բացատրում, ի՞նչ լարվածություն: Նրանք պատրաստվել են, նրանք տնային են կատարել, նրանք պահանջում են գրատախտակի մոտ կանչել: Նրանք դաս են սովորել. մենք ընդհանուր թեմա ունենք:

Ես այս ճանապարհի միայն սկզբում եմ: Տեսնում եմ Մանկավարժական համալսարանի հիմնական դպրոցի հմուտ, բանիմաց, նվիրյալ ուսուցիչներին՝ անվերջ շնորհակալ լինե-



Զարմացած եմ՝ բոլորի անուններն անգիր գիտեմ: Իզուր էի իրենց նույնիսկ ֆիզիկայի դասերին վերջին նստարանին նստած: Սիրելու համար ճանաչել է նախ պետք. Լիլիթը ֆիզիկա է սիրում, Ռաֆայելը՝ երկրաչափություն, Մերին՝ հայոց լեզուգ.. Նրանք յոթերորդ դասարանում են սովորում, դեռ յոթերորդ, ընդամենը յոթերորդ: Զենքից են խոսում, ասում են՝ զենքը սրբություն էր սասունցիների համար: Նարեկը զարմանում է, ասում.

-Զենքը ամենադաժան բանն է. ո՞նց կարող է սրբություն լինել:

Նարեկն ասում է, որ երբ դեռ փոքր էր (հիմա մեծ է), կարծում էր, որ շատ հպարտ է, որ հայ է: Հետո, երբ մեծացավ, տեսավ՝ ինչ է կատարվում, տեսավ՝ ինչքան հարցեր կան լուծելու, և սկսեց

լով իրենց թանկ գործը ժամանակավոր, բայց ինձ, մեզ վստահելու համար:

Շատ չեմ խոսում, չեմ պատմում հուզմունքի ու կարևորության չափի մասին, թվում է՝ հերթական ուսանողն է, հերթական յոթերորդցիներն ու հերթական 45 րոպեն: Չեմ վիճում. պետք չէ ծայրահեղության մեջ ընկնել, բայց ես այլևս երբեք առաջին անգամ դասարան չեմ մտնի, և նրանք այլևս երբեք առաջին անգամ Մաթևոսյանին չեն ծանոթանա: Ուրեմն մենք միասին նոր մի դուռ ենք բացում, որը բացելուց առաջ անպայման պետք է մտածել, թե ինչպես բարևենք իրար...

Տաթև ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՔՆՆԱՐԿՈՒՄ «ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ֆիզիկայի, մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի ամբիոնը կազմակերպել էր առցանց հանդիպում-քննարկում, որը նվիրված էր «Տեխնոլոգիա» առարկայի հիմնախնդիրներին: Մեր օրերում այդ առարկայի վերարժեքորումը մեծապես կապված է 21-րդ դարի պահանջների հետ:

Առցանց համաժողովին մասնակցում էին 6 տասնյակից ավելի «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցիչներ և ոլորտի մասնագետներ՝ լսելու իրենց դասախոսների խոսքը առարկայի նորովի մատուցման ու դասավանդման նոր մեթոդների մասին:

Մասնակիցներին ողջունեցին ՀՊՄՀ Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը, ֆակուլտետի դեկան Գագիկ Դեմիրխանյանը, ապա ընդարձակ ու հանգամանալի զեկուցումով հանդես եկավ տեխնոլոգիական կրթության ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտակ Սահրադյանը: Պրոֆեսորը խոսեց առարկայի մի շարք խնդրահարույց հարցերի շուրջ, վեր հանեց արդի խնդիրները՝ փաստելով, որ «Տեխնոլոգիա» առարկան հանրակրթական դպրոցի կարևոր բաղադրիչներից մեկն է:

«Տեխնոլոգիա» առարկան անցնում են աշխարհի բոլոր երկրներում, իսկ զարգացած երկրների կրթօջախների ավարտական քննություններից մեկը հենց այդ առարկան է,-ասաց Ա. Սահրադյանը:-Մեր անելիքներն ու ակնկալիքները շատ մեծ են առարկայի նկատմամբ, մեծ են նաև մերօրյա պահանջները»:

Թե՛ ուսուցիչները, թե՛ զեկուցողները խոսեցին «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցչի առջև ծառացած մի շարք մարտահրավերների՝ ոլորտում սահուն սերնդափոխությանն աջակցելու, առարկային տրամադրվող նվազ ժամաքանակի, առարկան շատ հաճախ ոչ մասնագետ ուսուցիչներին վստահելու, հեռավոր շրջանների դպրոցներում մասնագետների պակասի և այդ խնդիրը պետպատվերի միջոցով լուծելու, ցածր աշխատավարձի և մի շարք այլ կարևոր հարցերի մասին:

Ելույթ ունեցան տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Բորիս Խոդերյանը և ֆակուլտետի դեկանի տեղակալ, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Նունե Օրդյանը:

Բ. Խոդերյանը խոսեց «Տեխնոլոգիա» առարկայի պատշաճ դասավանդման համար անհրաժեշտ նյութատեխնիկական խնդիրների մասին, ուսուցիչներին էլ հորդորեց՝ ուսումնամեթոդական նյութեր պատրաստելիս առավել ստեղծարար լինել, իսկ Ն. Օրդյանը՝ «Տեխնոլոգիա» առարկայի՝ դեռևս նախագծային փուլում գտնվող նոր չափորոշիչների և առարկայական ծրագրերի մասին:

Ուսուցիչներն անդրադարձան իրենց պրակտիկայում հանդիպող մի շարք բացթողումների. որոնք կարելի է լուծել այլընտրանքային մեթոդներով, որպեսզի զարգացնեն սովորողների ճարտարագիտական մտածողությունը:

Առաջարկությունների մշակված փաթեթն առաջիկայում կներկայացվի համապատասխան մարմիններին՝ համատեղ լուծումներ գտնելու համար:

ՀԻՇԵԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

ԵՐԱԽՏԱՊԱՐՏ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՄԲ

Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանի հարկի ներքո ապրիլի 2-ին հավաքվել էին պատմաբան Գեղամ Կիրակոսյանի ուսանողները, ընկերներն ու հարազատները՝ հուշ միջոցառման շրջանակում նշելու ծննդյան 90-ամյակը, որը միաժամանակ նշանավորվեց «Սասուն» և «Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում (1386-1500) գրքերի շնորհանդեսով:

Ներկաները դիտեցին պատմաբանի մասին պատմող տեսաֆիլմ:

Գեղամ Կիրակոսյանի արմատները Սասունում են, որտեղից ծնողները եկել հաստատվել են Թալինի շրջանի Աշնակ գյուղում: Հենց այստեղ էլ 1931 թվականին ծնվել է ապագա նշանավոր պատմաբանն ու մանկավարժը: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո նա սովորել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետում, պաշտպանել թեկնածուական և դոկտորական ատենախոսությունները:

«Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում (1386-1500) մենագրությունը, «Հողի և արյան կանչով» և «Էրգիրն է կանչում» հուշագրությունները, «Սասուն» աշխատությունը և 40-ից ավելի գիտական հոդվածներն ամփոփում են մեծ պատմաբանի ու մանկավարժի գրական-գիտական ժառանգությունը:

Գեղամ Կիրակոսյանի ուսումնասիրությունների ծիրում հայրենի Սասունն էր՝ շաղախված էրգրի հանդեպ իր հայրենակից գրող Մուշեղ Գալշոյանի հոգուց և գրչից ծնված կարոտներով: Երկու մեծ անհատականություններ, որոնք խորապես զգացել են իրենց ծնողների՝ կորուսյալ երկրի հանդեպ սերն ու կարոտը:

Գեղամ Կիրակոսյանի գործունեությունը շուրջ կես դար կապված է եղել Մանկավարժականի հետ, ֆակուլտետի կայացման և մանկավարժական կադրերի պատրաստման գործում գիտնականի անուրանալի ավանդը մեծ հետագիծ է թողել բուհի ու նրա կրթած սերունդների պատմության ու հիշողության մեջ:

Ցավոք, նրա գրքերից երկուսը տպագրվեցին մահվանից հետո. զավակների ջանքերով լույս տեսած գրքերը պատմաբանի գիտական ուսումնասիրությունների, անխոնջ պրպտումների արդյունքն են, որոնք միջնադարյան պատմության ու հայրենի Սասունի մասին պատմագիտական, աղբյուրագիտական ուղեցույցներ են հաջորդ սերունդների համար:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, ԵՊՀ Պատմության ֆակուլտետից պրոֆեսոր Էդիկ Մինասյանը, գրող, հրապարակախոս, լրագրող Վրեժ Սարուխանյանը պատմում են Գեղամ Կիրակոսյանի հետ Արևմտյան Հայաստան կատարած այցից անմոռանալի ու հիշարժան դրվագներ, ուր պատմաբանը ժամերով պառկել է թաց հողի վրա՝ այդպես առնելով պապերի երկրի կարոտը:

Հայ պատմագիտության զարգացման գործին մեծապես նվիրված գիտնականի ու դասախոսի մասին սիրով ու երախտագիտությամբ են հիշում ուսանողները՝ այսօր արդեն ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը, դոցենտ Արման Մարտիրոսյանը, նրանք շարունակում են իրենց դասախոսի գործը՝ կրթելով ուսանողների նոր սերնդին, նաև ապրելով սիրելի դասախոսի, մեծ մանկավարժի նվիրումի ու թողած հարուստ ժառանգության հանդեպ երախտապարտ հիշողությամբ:

Դուստրը՝ Կարինե Կիրակոսյանը, գորովանքով հիշում է՝ ինչպես էր հայրը պատրաստվում ուխտագնացության դեպի Արևմտյան Հայաստան. «Մոռացել էր ամեն ինչ, անգամ մեզ… Տատի պատմածներն էր հիշում, հայրենի Աշնակ գյուղի երեկոները»:

Էդգար Հովհաննիսյանը դասախոսին բնութագրում է երկու բառով՝ խիստ և արդար: Գեղամ Կիրակոսյանը սոսկ դասախոս չէր, ուսանողները պատմում են՝ նա ավագ ընկեր էր, ուսուցիչ, խստապահանջ կեցվածքով, միաժամանակ շատ արդարամիտ:

Ծնվելով ու ապրելով հայրենիքից մազապուրծ եղած ծնողների միջավայրում՝ նրանցից ժառանգել էր հայրենի հողի հանդեպ հուշը, կարոտը, թախիծն ու տխրությունը, որոնք ամփոփ ներկայացրել է իր աշխատություններում:

Պատմաբան ընկերները փաստում են, որ Գեղամ Կիրակոսյանի մահով հայ պատմագիտությունը մեծ կորուստ կրեց. կորցրինք տաղանդավոր պատմաբանին, լավագույն մտավորականին. «Նա գիտելիքների շտեմարան էր, հայրենասեր անձնավորություն, սեփական ժողովրդի ու հայրենիքի պատմության նկատմամբ մեծ պատասխանատվություն ունեցող անհատ»:

Նա իր ուսանողներին ու զավակներին պատգամեց. «Երազային հեռուներում մնացին Սասունը, Մուշը, Վանը, դրախտային Խնուսը, Էրզրումը, Մանազկերտը, Բասենը, Կարսը, Սիփանը, Նեմրութն ու Գրգուռը, մնացին իբրև կապույտ երազներ, իբրև տեսած ու ապրած անուշ վերհուշ, իբրև իրական մորմոք: Ասում են, թե կապույտ երազները շուտ են իրական դառնում, իսկ սպասումի հույսն անխորտակ է և հզոր: Մեծ հավատով ու անխորտակ հույսով սպասենք մեր կապույտ երազների իրականացմանը»:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Կրթության արմատները դառն են, բայց պտուղը՝ քաղցր.



Մեր թվարկությունից առաջ ապրած մեծ մտածող Արիստոտելի խոսքերն արդի են նաև այսօր: Հենց այս քաղցր պտուղների հետքերով էլ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մի խումբ ուսանողներ կտրել անցել են հազարավոր կիլոմետրեր, հայտնվել մեկ այլ երկրի մեկ այլ համալսարանում, որ ստանան համակողմանի և արդիական կրթություն՝ նպատակ ունենալով իրենց ուժերի սահմաններում Հայաստան բերել աշխարհի լավագույն փորձը:

Մանկավարժական համալսարանն ակտիվորեն համագործակցում է արտասահմանյան բուհերի և գիտական կազմակերպությունների հետ: Համագործակցությունների շրջանակներում իրականացվում են պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների փոխանակումներ, համատեղ հետազոտական նախագծային աշխատանքներ, գիտաժողովներ, մրցույթներ, վերապատրաստման դասընթացներ և այլն:

Մանկավարժական համալսարանի Պատմության և հասարակագիտության ֆակուլտետը էրազմուս+ ծրագրի շրջանակներում 2019 թվականից բավական արդյունավետ համագործակցություն է հաստատել Մեծ Բրիտանիայի լավագույն կրթական հաստատություններից մեկի՝ Կիլի համալսարանի հետ: Այս ուսումնական տարում փոխանակման ծրագրով մեկ կիսամյակով Կիլ են մեկնել ֆակուլտետի 6 ուսանողներ:

Մեծ Բրիտանիան բազմազգ երկիր է. հարգանքն ու հանդուրժողականությունն այլ մշակույթների հանդեպ շատ բարձր է: Իզուր չէ, որ բրիտանական համալսարաններն ու կրթությունը լավագույններից են ամբողջ աշխարհում: Կրթական ծրագիրը հնարավորինս հարմարեցված է ուսանողների առօրյային, նրանց ծանրաբեռնվածությանն ու նախընտրություններին: Նրանց կրթական մոտեցումները, ծրագրերը էականորեն տարբերվում են մերից: Որևէ աշխատանք կատարելիս կարևորվում է նորարարությունը և թե ուսանողը ինչ նոր բան է բերում տվյալ մասնագիտական ոլորտ: Արդյո՞ք ուսանողն իր աշխատանքով ուղղակի կրկնում է այն, ինչ արդեն կա և գրված է մասնագիտական գրականությունում, թե՞ ինչ-որ նոր գաղափար է առաջ քաշում իր հետազոտությամբ: Նույն մոտեցմամբ անցկացվում են նաև քննությունները: Կարևորվում է ոչ միայն գիտելիքը, այլ նաև կիրառելու հմտությունը: Գրքում գրվածի, տերմինների ու թվերի փոխարեն ստուգում են քննադատական մտածողությունը:

Համալսարանում աշխատում են հնարավորինս քիչ ծանրաբեռնել ուսանողին, միևնույն ժամանակ նրանց սովորեցնելով էականն ու կարևորը: Որակը վեր է դասվում քանակից: Օրինակ գրավոր հանձնարարությունները չեն գերազանցում 1500 բառը: Սա օգնում է ուսանողին ավելի հակիրճ և կոնկրետ ձևակերպել մտքերը, ինչպես նաև առաջնայինը վեր դասել երկրորդականից: Այստեղ գնահատում են ոչ միայն դասախոսները, այլ նաև ուսանողները: Ուսանողին հնարավորություն է տրվում լրացնել հարցաթերթիկ և գնահատել դասախոսական կազմի ջանքերը, դասընթացի արդյունավետությունը: Ֆակուլտետները պարտավորվում են որոշակի ժամկետում բարձրացնել խնդիրները և հնարավորինս արագ լուծումներ տալ:

Համալսարանում առանձին կառույց է գրադարանը՝ կրթական, մշակութային, տեղեկատվական խոշոր հաստատություն, որը ստեղծում է անհրաժեշտ պայմանները տեղեկատվության հավաքագրման, մշակման և ընթերցողներին բոլոր հնարավոր ուղիներով հասանելի դարձնելու համար:

Ասում են՝ մարդը ծերանում է այն ժամանակ, երբ նրա մեջ մեռնում է ուսանողը: Կրթական համակարգից զատ էականորեն տարբերվում է ուսանողների առօրյա կյանքը: Կիլի համալսարանում գործում է ուսանողական խորհուրդ, որը հնարավորինս արտալսարանային առօրյան դարձնում է հարուստ, բովանդակալից և յուրօրինակ: Գործում են նետաձգության, լողի, պարի, մշակույթի, կինոդիտման և այլ խմբակներ:

Կիլի համալսարանում կարող եք հանդիպել ոչ միայն բրիտանական կրթական համակարգին ծանոթանալու մեկնած Մանկավարժական համալսարանի ուսանողներին, այլև հայկական գիտական ու մանկավարժական ավանդույթները բրիտանացիներին ներկայացնելու հրավիրված մեր բուհի դասախոսներին:

Մանկավարժական համալսարանի Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դասախոսները 2022 թվականի մարտի 14-25-ը փոխանակման ծրագրով հերթական անգամ Մեծ Բրիտանիայի Կիլի համալսարանում էին:

Ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Է. Հովհաննիսյանը, Գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պողոսյանը, համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խ. Ստեփանյանը երկշաբաթյա աշխատանքային այցով Կիլի համալսարանում էին: Նրանք հանդես եկան դասախոսություններով, ունեցան տարատեսակ հանդիպումներ և սեմինարներ:

Էդգար Հովհաննիսյանը հանդես եկավ «Խորհրդային Հայաստանի սփյուռքյան քաղաքականությունը», «Ազգային և էթնիկ հակամարտությունները Անդրկովկասում ԽՍՀՄ փլուզումից հետո», «Արցախյան հիմնահարցը արդի փուլում», Սամվել Պողոսյանը՝ «Էթնիկ զտումները և ցեղասպանական քաղաքականությունը Անդրկովկասում մինչև 1920թ.», «Հայոց ցեղասպանությունը և հայերի համակենտրոնացման ճամբարները», «Ղարաբաղյան հակամարտության ակունքները», Խաչատուր Ստեփանյանը՝ «Խորհրդային հանրապետությունների ձևավորումը և դրա ազդեցությունը էթնիկ հակամարտությունների վրա», «Լեռնային Ղարաբաղը Խորհրդային շրջանում», «Անդրկովկասի խորհրդայնացումը» թեմաներով:

Դասախոսությունների ընթացքում քննարկվեցին Արցախյան հիմնախնդիրը, դրա լուծումների ու հետագա անելիքների հարցը, Հայոց ցեղասպանությանն ու խորհրդային պետության ազգային քաղաքականությանն առնչվող հիմնահարցեր: Բրիտանացի ուսանողներին ու դասախոսներին բավական հետաքրքիր էր նաև ներկա աշխարհաքաղաքական իրավիճակը մեր տարածաշրջանում: Նման դասախոսությունները նպատակ ունեն օտարազգի ուսանողներին և պրոֆեսորադասախոսական կազմին ծանոթացնել Հայաստանին ու հայերի հետ կապված հիմնախնդիրներին:

Ալինա ՀԱԽՎԵՐԴՅԱՆ
Լաուրա ԲԱՋՅԱՆ
Լարիսա ՍԱՐԳՍՅԱՆ
Անի ԱՎԱԳՅԱՆ

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍ-ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ԱԲՈՎՅԱՆԸ ՄԻ ԿՏՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ Է

Մանկավարժական համալսարանի 100-ամյա հոբելյանը նշանավորվում է նաև Մեծ Լուսավորչի ու Մանկավարժի կյանքի ու գործի հանդեպ մեծագույն սիրո և հարգանքի տուրքով, ինչը անում են նրա գործի շարունակողները՝ համալսարանի շրջանավարտները, որոնք մեր օրոյա ուսուցիչներն են: Սա մանկավարժական կրթության շարունակական երթն է՝ սերունդների հարափոփոխ ընթացքի ուղեկիցն ու վկան:

Այս օրերին ավելի է սերտանում Մանկավարժական համալսարանի կապը հանրապետության տարբեր դպրոցների հետ, կազմակերպվում են համատեղ միջոցառումներ՝ արտացոլելով հետադարձ կապը շրջանավարտների հետ, որոնք ուսուցչական նվիրումի անկրկնելի դասեր են կազմակերպում՝ կրթության ջահն անմար պահելով իրենց սաների հոգում, ուսուցանում ու կրթում հայ երեխային՝ երկրի վաղվա օրվա զինվորին ու բժշկին, ուսուցչին ու բնագետին…

Այդ դասերից մեկը ապրիլի 1-ին անցկացվեց ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում բուհի Մանկավարժության ամբիոնի և Աբովյանի դ1 ավագ դպրոցի համատեղ նախաձեռնությամբ: Այն ինտեգրված դաս-միջոցառում էր: Պետք էր տեսնել դպրոցի ուսուցիչների ու

աշակերտների ներկայացրած աբովյանական դասը. մեծ գրողի ու մանկավարժի անհայտացման օրով պայմանավորված խորհրդանշական թատերականացված դասը միաժամանակ շրջանավարտների տարբեր սերունդների շրջանավարտների սիրո և նվիրումի անկեղծ դրսևորումն էր Խաչատուր Աբովյանի անունը կրող Մանկավարժական համալսարանի հանդեպ, որը կրկին ու կրկին փաստեց՝ Մանկավարժականի սերունդների երթն իր անխափան ընթացքի մեջ մշտապես գիտելիք ու լույս է սերմանել, վկան՝ այն ուսուցիչները, որոնք այդ երթի նվիրյալներն են բոլոր ժամանակներում:

Ահա դպրոցի 12-րդ դասարանի աշակերտները բեմի վրա են. Խաչատուր Աբովյանն ու Ֆրիդրիխ Պարրոտը զրուցում են այնքան կենդանի ու բնական՝ մեզ հետ տանելով մեկ դեպի դորպատյան ուսումնառության միջավայր, մեկ՝ ծննդավայր, որի յուրաքանչյուր անկյունը գրողի հիշողության մեջ ամեն պահ կենդանանում է, դառնում կարոտ ու հուշի թևով նրան վերադարձնում ծննդավայր՝ Ձանգվի ափերը:

Ուսուցիչներն ու աշակերտները Խաչատուր Աբովյանի քնարական կերպարի նոր բացահայտումներով հուզեցին դահլիճը, աշակերտներն այնքան բնական ու անմիջական ներկայացրին Լիբեր Արմենիենին, որը հասել էր Դորպատ՝ լույս բերելու իր ժողովրդին, և Դորպատը դարձել էր նրա երկրորդ հայրենիքը:

Ահա Աբովյանը բախվում է ռուս հակահայ քաղաքականությանը. և եղավ այն, ինչ եղավ…

Ելույթներն ավելի քան ոգեշնչող էին՝ հագեցած ինտեգրված դաս-միջոցառման և համալսարան-դպրոց ջերմ մթնոլորտի գնահատականներով… Ելույթ են ունենում Մանկավարժական համալսարանի նորընտիր ռեկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը, Աբովյանի հմ. 1 ավագ դպրոցի տնօրեն, ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի 1996 թվականի շրջանավարտ Քարմիլե Առաքելյանը, Մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աիդա Թոփուզյանը, Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը, Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը:

Դպրոցի տնօրենը փաստում է, որ դպրոցի և համալսարանի Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի, Մանկավարժության ամբիոնի հետ մշտական կապի մեջ են, և այդ կապերն առավել ամուր են դարձել Մանկավարժության ամբիոնի դոցենտ Գրետա Հակոբյանի շնորհիվ:

Եվ իբրև ամփոփում՝ Աիդա Թոփուզյանն ասում է՝ դասը ստացվեց, մենք տվեցինք մեր մանկավարժական գնահատականը. իրականում այս դասը մեր բուհի շրջանավարտների յուրօրինակ հաշվետվությունն էր, որին պատրաստվել էին մտքով ու սրտով:

Ուսուցիչներն էլ փաստեցին. «Խաչատուրը մի կտոր Հայաստան է», ում միջոցով յուրաքանչյուր օտարերկրացի կճանաչի ու կսիրի այն:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՇՆՈՐՀԻՎ ԿՅԱՆՔԻ ՀԱՆԴԵՊ ՍԻՐՈ

Դժվարություններ ու խնդիրներ կյանքում պատահում են՝անկախ տարիքից ու սեռից: Այս ժամանակահատվածում տրամադրության անկումն անխուսափելի է լինում. չենք ընդունում, որ հանգամանքների բերումով խաթարվում է մեր կանխորոշած ուղին: Երբ խնդիրն առողջությանն է վերաբերում՝ մեզ մնում է միայն հավատալ, աղավինել Աստծուն ու հաղթահարել հերթական փորձությունը: Ուժեղ է պետք լինել՝ չկորցնելու համար առողջ դատելու ունակությունը, չէ՞ որ դժվարությունները հարատև են լինում միայն հանձնվելու դեպքում: Գլխումս պտտվող անհամար մտքերն ինձ այլևս չէին անհանգստացնում. գիտեի՝պարզապես պետք է հավատալ, պայքարել ու հաղթել, հաղթել այս դեպքում հիվանդությանը:

Աստծո հանդեպ ունեցած հավատի, պայքարելու կամքի շնորհիվ, ուռուցքաբաններ Ռուբեն Լևոնի Հարությունյանի և Աննա Լևոնի Կիզոկյանի, առհասարակ, Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ինստիտուտի ողջ բուժանձնակազմի հոգատարության շնորհիվ՝ ես հաղթեցի, ես այսօր Հաղթող եմ:

Հաղթահարելով կյանքի ևս մեկ շրջափուլ, ևս մեկ արկած ու փորձություն՝ երախտապարտ եմ Ձեզ, սիրելի և հարազատ դարձած բժիշկներ, ինձ՝շատախոս աղջկաս, առողջություն, լայն ժպիտ և ապրելու ևս մեկ հնարավորություն ընձեռելու համար:

Արմիկ Գրիգորյան
ՀՊՄՀ
հեռուստառադիոլրագրության
երկրորդ կուրսի ուսանողուհի



«Երազներից դեպի նպատակների իրականացում», - այսօր այս սկզբունքով է առաջնորդվում մեր սիրելի կուրսընկեր Արմիկը, որը կարծես նոր ծնունդ է առել: Հիասթափություն ու վախ. սա մի շրջան էր, որը պարզապես կարճ ժամանակով այցելեց Արմիկին: Իսկ այսօր այդ ամենն անցյալում է՝ շնորհիվ սեփական հավատի ու կյանքի հանդեպ սիրո: Արմիկն այսօր կարծես նոր մարդ լինի՝ լի կյանքով, ուրախությամբ, նոր մոտվիացիայով ու մտքերով: Նա ունի բազմաթիվ նպատակներ, որոնց մեծ ոգևորությամբ փորձում է հասնել: Վստահ ենք՝ մեր կուրսընկերուհու մոտ այդ կստացվի:

ՀՊՄՀ հեռուստառադիոլրագրության
երկրորդ կուրս

«Գնալ նպատակի հետևից մինչև վերջ»,-~~~

ասում է Սոնան

«Ինչ էլ լինի, չհանձնվել, գնալ նպատակի հետևից միչև վերջ»,-այսպիսին է պատանի ստեղծագործող և ապագա ծրագրավորող Սոնա Ստեփանյանի կյանքի կարգախոսը:

Սոնան ապրում է Կոտայքի մարզի Ակունք գյուղում, սովորում է տեղի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանում: Խոսելով մանկությունից՝ հիշեց մի քանի դրվագ. «Զարաճճի երեխա եմ եղել, մինչև չորս տարեկան քնել եմ մայրիկիս ձեռքերի վրա՝ պարտադիր օրորոցայինի ներքո»:

Տատիկի ամենասիրելի պատմությունը հիշեց, որ փոքր ժամանակ միշտ հում ձու է խմել, մտածել եմ՝ մեծանա՝ երգչուհի է դառնալու: Որոշ ժամանակ զբաղվել է երաժշտությամբ, բայց չի ցանկացել խորանալ դրանում: Նպատակները տարբեր են եղել: 14 տարեկանում սիրել է ստեղծագործել ու ասմունքել: Նույնիսկ հեղինակային բանաստեղծություններ ունի տպագրված «Ձնծաղիկներ» պատանեկան գրքում: Այնտեղ շարադրված են իր զգացումները:

Ժամանակի հետ փոխվել են նախասիրությունները: Հիմա սովորելով Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում և դպրոցի Արմաթ լաբորատորիայում, ապագայում իրեն տեսնում է ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտում:

«Ռեժիսորից՝ բժիշկ, բժշկից մինչև լուսանկարիչ. հետո միայն հասկացա, որ ամեն ինչ կարող եմ ստեղծել SS (տեղեկատվական տեխնոլոգիաներ) ոլորտում: Թումոն ու Արմաթն էլ օգնեցին հստակ համոզվել ու նոր ճյուղով մասնագիտանալ»,-մեզ հետ զրույցում ասաց Սոնան:

Ձեռքբերումների ու հաջողությունների համար շնորհակալ է իր ընտանիքին, հատկապես Ջոնիկ տատին՝ միշտ իր կողքին լինելու և խրախուսելու համար: «Ընտանիքից բացի, իմ կյանքում մեծ դեր խաղաց իմ ուսուցչուհին՝ Հերմինե Աբրահամյանը,

որն իմ մեջ բացահայտեց մի նոր Սոնայի: Արդյունքում ես այսօր իրական հայ եմ ու պատրաստ եմ պայքարել իմ հայրենիքի համար: Նա այն մարդկանցից է, որոնք մեծ դեր ունեն իմ անհատականության ձևավորման ու զարգանալու գործում: Ձեմ կարծում, թե նորից կվիճակվի ճանաչել նրա նման հզոր մարդու, որն ամբողջ կյանքը նվիրել է հայրենիքի զարգացմանը և կրթության գործին: Ես շնորհակալ եմ նրան»,-ասաց Սոնան: Նա նաև շնորհակալ է ընկերներին, որոնք շատ չեն, բայց հարազատ են ու անգնահատելի:

Կյանքի նպատակը որակյալ կրթություն ստանալն է և հասարակության համար պիտանի մարդ դառնալը: Իսկ գերագույն խնդիրը երկրի հզորացումն է. «Մեզ հզոր Հայաստան է պետք»:

Լուիզա ՍԱՐԳՍՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետի
հեռուստալրագրության բաժնի 2-րդ կուրս
ուսանողուհի

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 8.04.2022 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ